# ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԲԱՑ ԴԱՇՏՈՒՄ

## Խորհրդածություններ (մասնակի կրճատումներով)

Ասում ենք՝ հնագույն եւ քաղաքակիրթ ժողովուրդ ենք: Պատասխանում եմ՝ հնացած եւ անկիրթ ժողովուրդ ենք դարձել: Հնագույնն ու քաղաքակիրթը ճշմարտություն էր ընդդեմ վայրենի խաշնարածների, որ եկան, նվաճեցին, մնացին եւ հիմա ամեն ինչով շատ ու շատ առաջ են մեզանից:

Հնացածն ու անկիրթը մեր այսօրվա բուն հայաստանյան վիճակն է: Ասես հոգնել ենք ինքներս մեզանից, ասես հոգնել ենք հայ լինելուց, հայ ապրելուց: Նաեւ անկիրթ ենք թե՛ մեր պահվածքով, թե՛ մեր կենցաղով, թե՛ մեր մարդկային հարաբերություններով եւ թե՛ այն աղտոտություններով, որ մեր շուրջ հանդուրժում ենք: Դարձել ենք ժողովրդի մի տեսակ, որի հարաբերությունների խորհրդանիշը դարձել է *ապերո*-ն: *Ապերոյությունը* իշխում է ամեն ինչի վրա, լուրջը վերածում անլուրջի եւ ընթացք տալիս կենսակերպի այդ ձեւին: Դա հենց այն է, ինչը կոչվում է հայկական մանրէ եւ համակերպվածության դատապարտում բոլորիս: Դա եղբայրը չէ, արժանապատիվ տիայրը, ընկերը կամ պարոնը չէ, այլ չսափրված, անմաքուր, անկիրթ, ամենուր խցկվող ու իրեն պարտադրող ապերոապերոյականությունը...

Այս մթնոլորտում բարձր մշակույթը չի կարող կենսավորվել: Եվ պատահական չէ, որ 20-րդ դարի մեր արժեքները կա՛մ դրսում ստեղծվեցին, կա՛մ դրսի աշխարհի հետ ունեցած անմիջական շփումներով գոյացան՝ Իսահակյան, Վարուժան, Տերյան, Չարենց, Կ. Զարյան, Մ. Սարյան, Ա. Խաչատրյան: Պ. Սեւակը 1950-ականներին 8 տարի ապրեց Մոսկվայում: Պատահական չէ նաեւ, որ մեր ոգեղեն բարձր արժեքներն այսօր էլ դրսից են գալիս՝ որպես օտարագիր գրականություն (Սարոյանը եւ նրա հետնորդները), որպես նկարչություն (Արշիլ Գորկին եւ նրա հետնորդները), որպես երգ ու կատարում (Շարլ Ազնավուր, Շերելին Սարգսյան), որպես Հայ դատը համաշխարհային չափանիշներով ներկայացնող շարժանկարներ ( Անրի Վերնոյ (Աշոտ Մալաքյան)՝ «Մայրիկ», Ատոմ Եղոյան՝ «Արարատ»):

Ասում ենք՝ թե՛ անցյալում եւ թե՛ այսօր ստեղծել ենք այսպիսի-այսպիսի խոշոր արժեքներ: Պատասխանում եմ՝ պետականորեն հովանավորվող միակ գործունեությունը իրականացրել է Մեսրոպ Մաշտոցը, քանզի նրան աջակից էին երկրի արքան ու Վեհափառը: Խորենացին ու Փարպեցին ունեցել են պատվիրատու, բայց պետական հովանավորություն նրանք չեն վայելել, հալածանքն անպակաս է եղել նրանցից: Մյուսները՝ Նարեկացուց մինչեւ Սայաթ-Նովա, Աբովյանից մինչեւ Թումանյան, Տերյանից ու Չարենցից մինչեւ Շիրազ, Սահյան ու Սեւակ, կան միայն իրենց անհատական ձիրքի ու անհատական ջանքի շնորհիվ: Պետականորեն



կամ պաշտոնապես նրանք չեն հովանավորվել: Սայաթ-Նովայի, նրանից առաջ նաեւ Նաղաշ Հովնաթանի պալատական երգիչ լինելն անգամ նրանց չփրկեց:

Խորհրդային ժամանակները պաշտոնապես հովանավորում էին գրողներին ու մշակույթի գործիչներին: Բայց ո՞վ հովանավորված դուրս եկավ՝ Չարե՞նցը, Բակո՞ւնցը, Մահարի՞ն, Արմե՞նը, Լեռ Կամսա՞րը, Շիրա՞զը, Դաշտե՞նցը, Սեւա՞կը, Սահյա՞նը... Եվ ո՛չ մեկը: Որովհետեւ հալածանքների կամ լռության բաժինն առավել չափով նրա՛նց է վիճակվել: Պաշտոնապես օրինականացվել են միջակությունները եւ բոլշեւիզմի ձայնափող դարձածները, որոնց մնացուկները դեռ այսօր էլ կան:

Հիմա այսօր արվեստը, այդ թվում նաեւ գրականությունը, պետական լուրջ հովանավորություն, ըստ էության, չեն վայելում: Կան մրցանակներ եւ ոչ միշտ ճիշտ ընտրված մրցանակակիրներ, կան անհատ հովանավորներ եւ ոչ միշտ տեղին հովանավորված գրողներ ու գրքեր: Կան պետական պատվերով լույս տեսնող գրքեր, որ առաջին հերթին ցույց են տալիս պետական միջոցների փոշիացումը եւ դրանց անարդյունավետ օգտագործումը՝ միջակության վիթխարի քանակության ապահովումով:

Հիմա էլ դրամահավաք է: Հարց է առաջանում՝ ո՞ւմ համար են կուտակում այդ միջոցները: Պատասխանն ինքնին հետեւում է՝ գրական ճահիճը կերակրելու: Ինչո՞ւ: Որովհետեւ ճշմարիտ գրողը, ճշմարիտ գրականության մարդը մատների վրա է հաշվվում, մնացածը գրականություն անողներ են, գրականության հաշվին ապրողներ: Ճահիճը հենց դա է: Արժե՞ ճահիճը կերակրելու համար միջոցներ վատնել՝ այսքանը ահել գրողներին, այսքանը ջահել գրողներին: Կարծում եմ, այդպես չի՛ կարելի: Պետք է ուղղակի եւ անմիջնորդ հովանավորվեն միայն տաղանդավոր գրողներն ու տաղանդավոր գրքերը: Իսկ միջոցների կուտակման դեպքում աչքի առաջ պետք է ունենալ դասական գրողների անտիպ, չհավաքված եւ վերահրատարակության պահանջ ունեցող ժառանգությունը: Ո՞վ պետք է մտածի այս մասին:

Այս անկազմակերպ վիճակը կարող է դառնալ անընդհատական, քանի որ մենք դեռ չունենք պետական ծրագիր՝ ազգային արվեստի, մշակույթի ու հայագիտության նկատմամբ: Անհրաժեշտ է ազգային արվեստի ասպարեզում պետականորեն գործադրվող ծրագրի առկայությունը, գոնե զարգացման հեռանկարների եւ գերակայությունների մշակման ուղղությամբ:

Հայ մշակույթն այսօր հայտնվել է համաշխարհային մշակույթի բաց դաշտում: Բարձր արվեստի մասին խոսելը գուցե սխալ է, իսկ եթե սխալ էլ չէ, համենայնդեպս, առայժմ թողնենք մի կողմ: Խոսենք մեզ շրջապատող զանգվածային կոչված «արվեստի» մասին, որի ամենօրյա արտահայտություններն են հեռուստատեսությամբ ցուցադրվող շարժանկարներն ու տեսահոլովակները, երթուղային փոխադրականներից, սրճարաններից, շուկաներից, ձայնասփյուռից ու պատկերասփյուռից հնչող երաժշտությունը... Այդ շարժանկարները կոչված են կործանելու մարդուն, նրան դարձնելու շարժուն հանցագործ: Կոչված են մարդու մեջ արթնացնելու մարդասպանին, բռնարարքներ գործադրողին, խարդախին, խաբեբային, եսասերին, ազգային ու հանրային մտահոգությունից ինքն իրեն ազատագրած անասունին: Իսկ այդ երաժշտություն ասածը կա՛մ նվնվոց է, կա՛մ աղմուկ, կա՛մ հունա-արաբա-պարսկա-թուրքա-քրդական նմանակումների մի զարհուրանք, ինչը շատ ու շատ հեռու է անգամ զանգվածային «արվեստ» համարվելուց...

Եվ սրա մեջ է անցնում մեր ժողովրդի «մշակութային» առօրյան՝ գիշեր-ցերեկ:

Արվեստն իջել է իր պատվանդանից եւ իր այդ անվան քողածածկույթով վերածվել լայն օգտագործման առարկայի մի տեսակի ու կենցաղային պահանջմունքներ բավարարելու միջոցի: Այս դեպքում հանցագործություն է ժողովրդական-ժողովրդականություն բնորոշիչների օգտագործումը, որովհետեւ ժողովուրդ հասկացությունն այլեւս չի համապատասխանում իր նախկին կոչմանն ու իմաստին: Ակնհայտորեն այդ արտահայտություններով այսօր փորձում է պատսպարվել ցածր արվեստը: Այդ իսկ պատճառով վեր ու բարձր, որ նույնն է, թե մասնագիտորեն վստահելի մի ինչ-որ բան է անհրաժեշտ:

Խորհրդային ժամանակներում «ժողովուրդների ինտերնացիոնալ բարեկամությունը» պահպանելու համար տարբեր հանրապետություններից ու ազգային փոքրամասնություններից միշտ մեկ-երկու անուն առաջ էին մղում, պլանավորված կարգով ուժեղի հետ մեկտեղ թարգմանում էին նաեւ թույլին, գրական շաբաթներին ու տասնօրյակներին երեւում էին դեմքեր, գնում-գալիս էին պատվիրակություններ, եւ այսպես թե այնպես ապահովվում էր հայ մշակույթի ներկայությունը խորհրդային վիթխարի տարածքներում, թեեւ այդ ժամանակ էլ ունեինք լուրջ մտահոգություն, ըստ որի՝ մենք մեզ ինչպես հարկն է չէինք կարողանում ներկայացնել:

Խորհրդային համակարգն ուներ մի շատ մեծ առավելություն եւս. Մոսկվան արվեստի հարցերում առաջնորդվում էր համաշխարհային չափանիշներով: Կառուցվածքը, դրվածքը կար, եւ դրա օրինակով համանման կառույցներ էին ստեղծվում նաեւ ազգային հանրապետություններում. ով օպերային թատրոն չուներ, ունեցա՛վ, ով սիմֆոնիկ նվագախումբ, բալետ, կինոստուդիա, հանրագիտարան չուներ, ունեցա՛վ: Իր գաղափարական սահմանափակվածությամբ հանդերձ, սա մշակույթի մեծ ու բաց դաշտ էր, որ առավել չափով նպաստում էր չափանիշի պահպանմանը եւ միջոց էր՝ փրկվելու գավառականացումից: Կար մոսկովյան չափանիշին հասնելու ձգտումը, կար համաշխարհային փորձը երբեմն ուղղակի, ավելի հաճախ՝ միջնորդավորված անցումով յուրացնելու ցանկությունը:

*Շարունակությունը՝ էջ 6*

# ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

## ԳԵՎՈՐԳ Բ ԳԱՌՆԵՑԻ (876-897)

*Սկիզբը՝ էջ 3*

Սյունյաց իշխան Վասակ Գաբուռի տիկնոջ՝ Մարիամ իշխանուհու օժանդակությամբ նա 874 թվին երկու ոչ մեծ, բայց գեղեցիկ եկեղեցիներ է կառուցում, որոնցից մեկը կոչվում է Սբ. Առաքելոց, իսկ մյուսը՝ Սբ. Աստվածածին: Կղզի է այցելում անձամբ ինքը՝ հայոց իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին, որը վանքին է նվիրում խաչափայտի աստվածընկալ նշանը, որը հավանաբար նվեր էր ստացել Փոտ պատրիարքից, եւ վանքին որպես կալվածքներ հանձնում է Վարսեր, Ցամաքաբերդ, Գոմաձոր, Բերդք, Ուսյաց սափ գյուղերը, այգիներ Երեւանում եւ Գառնիում եւ այլ արգավանդ հողամասեր:

Չնայած Մաշտոցի մաքրակենցաղությանն ու հռչակին՝ կաթողիկոսի եւ նրա միջեւ հարաբերությունները լարվեցին, եւ անգամ Մաշտոցին նզովքի ենթարկելու վտանգ առաջացավ: Պատմիչները, խորապես հարգելով հոգեւոր այս առաջնորդներին, միջադեպի մասին տեղեկություններ չեն հաղորդում: Դրա հպանցիկ հիշատակությունը պահպանվել է Մաշտոցի կողմից Աբաս սպարապետին գրված նամակում, որտեղ Մաշտոցն ընդունում է, որ սխալ է թույլ տվել, քանի որ առանց բարձրագույն համաձայնության՝ հաղորդակցության մեջ է մտել քաղկեդոնականների հետ: Նրան սպառնացել են նզովել, իսկ նա էլ, իր մեղքն ընդունելով, ներում է հայցել, որով միջադեպը փակվել է: Մաղաքիա Օրմանյանը ենթադրում է, որ այդ եղել է հավանաբար Փոտ պատրիարքի կողմից ժամանած պատվիրակության եւ Շիրակավանի ժողովի ժամանակներում:

Իհարկե, այս իրադարձությունները, ընդհանուր առմամբ, բոլորովին էլ չէին խանգարում երկրի անդորրը: Ավելին. հայոց կաթողիկոսը եւ երկրի նշանավոր իշխանները, համաձայն պատմիչների, որոշում են Աշոտ Բագրատունուն թագավոր հռչակել: Ստեփանոս Օրբելյանի հաղորդմամբ՝ այդ գործի գլուխ էին կանգնած Գրիգոր-Դերենիկ Արծրունին, Գրիգոր-Սուփան Սյունին, որը հաջորդել էր հորը՝ Վասակ-Գաբուռին, Վասակ Իշխանիկ Սյունին, որոնք հայոց այլ իշխանների հետ դիմեցին Ահմեդ-Աբուլ-Աբաս (ըստ պատմիչի՝ Ահմադ) անունով խալիֆին կամ ամիրապետին եւ Աշոտ Բագրատունու համար թագ խնդրեցին: Հարցը նախապատրաստել եւ ժամանակին առաջին քայլերն էր ձեռնարկել դեռեւս Զաքարիա կաթողիկոսը, եւ, անշուշտ, դրա շարունակողը եղավ Գեւորգ Գառնեցին: Իշխաններն իրենց խնդրանքը խալիֆին ուղարկեցին Շեխի որդի ոստիկան Իսեի ձեռքով, ինչպես հավաստում է Հովհաննես Դրասխանակերտցին: Հասկանալի է, որ այս իրադարձություններում Աշոտ Բագրատունին չէր կարող նախաձեռնողի դերում հանդես գալ, սակայն տարակույս չկա, որ գաղափարը ծնվել էր նրա հզոր ուղեղում: Կաթողիկոսը դարձավ նրա խոսափողը եւ նախարարներին կազմակերպողն ու խնդրագիրն ուղարկողը:

Ասել, թե հայոց կաթողիկոսի եւ իշխանների խնդրագիրը հաճությամբ ընդունվեց Բաղդադում, հազիվ թե ճիշտ կլինի: Երկար ժամանակ պատասխանը ձգձգվում էր: Սակայն խալիֆայության թուլացումն ու Բյուզանդական կայսրության ուժեղացումն այնպիսի գործոններ էին, որ ամիրապետը, վախենալով, թե Հայաստանը բացասական պատասխանի դեպքում ընդհանրապես կհայտնվի Բյուզանդիայի ազդեցության ներքո, հարկադրված ճանաչեց Աշոտ Բագրատունու թագավորությունը, իսկ վերջինս պետք է տարեկան հարկ վճարեր: Հարկավ, դրան նպաստեց նաեւ Իսեի միջնորդությունը, որը, անտարակույս, լիովին վարձատրվել էր, եթե չասենք՝ կաշառվել՝ իր միջնորդության համար: Հենց նա էլ եկավ Հայաստան՝ բերելով խալիֆի ուղարկած թագը, թագավորական



հանդերձները եւ բազմաթիվ նվերներ, նժույգներ, զենքեր ու զարդեր: Գահակալության հանդեսներին մեծ շուք տալու համար Աշոտ Ա Բագրատունու օծումը կատարվեց կաթողիկոսի կողմից, որով նվիրագործվեց հայերի մեծ երազանքը՝ Հայոց թագավորության վերականգնումը:

*Շարունակելի*

**ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
*Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*



# ԱՐՔ. ԻՈՀԱՆ ՍԱՆ-ՖՐԱՆՑԻՍԿԱՑԻ (ՇԱԽՈՎՍԿՈՅ)

# ԳՈՎՔ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ

Մենք՝ մարդիկս, արագորեն նկատում ենք մեր հանդեպ կատարված ամեն մի անարդարություն: Ոմանք էլ վիրավորվում են իրենց ողջ շրջապատից եւ նույնիսկ հենց Աստծուց, եթե ինչ-որ բան նրանց կյանքում չի ստացվում այնպես, ինչպես կուզենային: Բայց այն անարդարությունը, որ թույլ ենք տալիս մենք ինքներս աշխարհում, մեզ քիչ է անհանգստացնում: Ընդհանրապես նույնիսկ դժվարանում ենք ընդունել:

Արդարություն. ինչպիսի՜ սքանչելի բառ: Նրանում ինչ-որ աստվածային բան կա: Այն ոգեշնչում, գերում ու տանջում է: Սրբությամբ ենք տառապում, երբ պայքարում ենք հանուն այլոց արդարության, եւ թախիծն է պատում մեզ, երբ հասնում ենք լիակատար արդարության՝ մեր հանդեպ ուրիշների թույլ տված՝ հաճախ անգամ չնչին բաներում:

Ինքը՝ արդարությունը մեզ ամբողջ ժամանակ դրդում եւ ստիպում է կանգնել արդարությունից վեր, եւ երբեք չլինել նրանից ցածր: Երբ արդար ենք գործում, մեր հոգին խաղաղություն ու ուրախություն է ապրում, մանավանդ, երբ մեր զգացումներում արդարությունից ավելի վեր ենք լինում: Արդարությունից վեր լինել նշանակում է մտնել արդեն Քրիստոսի սիրո Թագավորություն:

Մարդիկ ունեն զգացումներ, որ կարելի է կոչել շռայլ, հարուստ, օրինակ՝ սերը, մեծահոգությունը, անշահախնդրությունն ու անձնուրացությունը: Բայց ունենք նաեւ առավել համեստները, որոնք առօրյա կյանքում, թերեւս, առավել անհրաժեշտ են մեզ, որոնց բացակայությամբ երկրի վրա կյանքը կարող է դառնալ միանգամայն անտանելի: Այդ համեստ ու խաղաղ զգացումներից մեկն էլ արդարությունն է: Այն կարգավորում է մարդկային ու անձնական, հասարակական ու պետական կյանքի հիմքերը: Արդարություն հասկացությանն արժե վերագրել նաեւ պարզ ազնվությունը, ճշմարտությունը, հարգանքը մեկ այլ մարդու, նրա կյանքի, նրա խոսքի, նրա ազատության նկատմամբ: Ազատությունը մարդու կյանքի ամենագլխավոր մասնաբաժինն է, եւ այն պետք է արդարորեն պաշտպանել: Արդարադատությունը ձեւավորվում է պատվիրաններով՝ Աստծուց տրված մարդուն Սինա լեռան վրա: Դրանք բոլորն էլ խոսում են Աստծո Օրենքի արդարության մասին: Վերջին՝ 10-րդ պատվիրանը խոսում է այն մասին, որ ուրիշի նկատմամբ, նույնիսկ մեր ամենածածուկ ցանկություններում, չի կարելի թույլ տալ անարդարություն: Չի կարելի որեւէ բան ցանկանալ, որը կարող է խախտել մեկ ուրիշի կյանքն ու իրավունքը:

Ես սերը կոչեցի որպես շռայլ, «հարուստ» զգացմունք: Իհարկե դա վերաբերում է ոչ բոլոր սերերին, այլ միայն ինքնամոռաց ու արդար սիրուն: Օրինակ՝ եթե ծնողները, որոնք զավակ են որդեգրել, բայց նրան ավելի վատ են վերաբերում, քան իրենց սեփականին, դրանով իսկ նրանք թույլ են տալիս անարդարություն: Այսպիսով արդարությունը հսկում է նաեւ սիրուն:

Իսկ ի՞նչ է ասում Աստվածաշունչը սիրո մասին: Հոբի գիրքը Հոբի մասին խոսում է դրվատանքով. «Այդ մարդը... անարատ էր, արդար» (Հոբ Ա 1):

118-րդ սաղմոսում Աստծո մասին ասվում է. «Տիրոջ արդարությունը ուղիղ է... Տիրոջ դատաստանները ճշմարիտ»: Դրանից պետք է եզրակացնել, որ եթե մեր հանդեպ չենք զգում Աստվածային արդարությունը, ապա նշանակում է՝ մեր խիղճը հետ է մնացել ժամանակից ու Աստծո ճշմարտությունից:

Վերջերս մի երիտասարդ պատմում էր ինձ՝ իր հետ տեղի ունեցած մի տհաճ դեպքի մասին: Մի բենզապարկի գողության հետ կապված, նա, որ պատահմամբ մոտակայքում է գտնվելիս եղել, կալանքի է վերցվել: Մինչեւ բացահայտվել են այդ դեպքի հանգամանքները, նա որոշ ժամանակ մնացել է կալանված: Ինձ զարմացրեց եւ ուրախացրեց այդ մարդու արձագանքն այդ իրողությանը՝ չնայած իր հանդեպ թույլ տրված անարդարության: Նա ասաց. «Ընկնելով այդ պատմության մեջ՝ ես սկսեցի մտորել կատարվածի մասին եւ եկա այն եզրակացության, որ այդ կատարվածի մեջ կար բարոյական օրինաչափություն: Ես դրանում տեսա վերին արդարություն: Բանն այն է, որ ես մի անգամ կատարել էի անբարո մի արարք եւ մարսել: Եվ պետք էր, որ այժմ կրեի ինչ-որ մի տառապանք: Դա արդար էր»: Ես զարմացա այդ երիտասարդի՝ կյանքի իմաստի մեջ նման բարոյական մաքուր, կրոնական ներթափանցումից: «Այդպիսին է ճշմարիտ հավատն առ Աստված»,- մտածեցի ես:

Խիղճը՝ որպես արդարության ընդգրկուն զգացում, բնորոշ է մարդուն (մարդը պատկերն է Աստծո): Երեխաների եւ երիտասարդների մոտ խիղճը հաճախ լինում է ավելի զգայուն, քան այս կյանքի անարդարություններն ապրած ու շնչած տարեցների մոտ: Իր կյանքի ճանապարհը բարոյական փոխզիջումներով անցնելով՝ մարդը հետզհետե սննկանում է հոգով եւ դադարում զգալ ուրիշի հանդեպ իր անարդար լինելը, այն դեպքում, երբ իր նկատմամբ ամեն մի անարդարություն խիստ ծանր է տանում:

87-րդ սաղմոսում աղքատներին ցուցաբերվող գթասրտությունը կոչվում է ոչ թե գթասրտություն, այլ արդարություն. սա, անշուշտ, ճշմարիտ է: «Աղքատաց արդարություն ցուցաբերեք»,- ասում է Աստվածաշունչը: Եթե դու ունես երկու կտոր հաց եւ կամ երկու շապիկ, իսկ քո կողքինը ոչ մեկը չունի, եւ երբ դու կարոտյալին տալիս ես քո մի կտոր հացը եւ շապիկներից մեկը, ապա դա ոչ սեր է եւ ոչ էլ անգամ գթասրտություն, դա արդարություն է: Եփեսացիներին ուղղված թղթում, խոսելով երեխաների՝ ծնողներին հարգելու մասին, Պողոս առաքյալը այն համարում է ոչ թե հերոսություն կամ ինքնազոհություն, այլ ընդամենը արդարություն: Աստծո՝ մարդուն տված պատվիրանը՝ «Պատվի՛ր քո հորն ու քո մորը, որպեսզի բարիք գտնես, երկար ապրես... երկրի վրա» (միակ պատվիրանը խոստումով), ցույց է տալիս արդարության ճանապարհը: Չպատվել, անուշադրության մատնել մարդկանց, որոնք մեզ հայր ու մայր են ընտրվել Աստծո կողմից, մեզ լույս աշխարհ բերել, ահռելի ջանք թափել մեզ համար, մեծ ու ճչացող անարդարություն է: Ցավոք, ոչ բոլորն են դա գիտակցում: Սակայն երբ իրենք են զգում իրենց զավակների անարդարությունն իրենց նկատմամբ, այնժամ ավելի լավ են հասկանում իրենց մեղքը:



Գողգոթայում աշխարհի Փրկչի կողքին խաչ ելած բարեմիտ ավազակը մյուս՝ չարացած խաչյալին սաստեց՝ արտահայտելով մտքեր, որոնք ցույց էին տալիս նրա բարոյական գիտակցության ու վսեմ արդարամտության հստակությունն ու ազնվությունը: Նա այսպես ասաց իր՝ նույնպես խաչի վրա մահն ընդունող ընկերոջը. «Մենք իրավացիորեն արժանի հատուցում ենք ստանում այն գործերի համար, որ կատարեցինք, իսկ սա (Քրիստոսը) որեւէ վատ բան չի արել» (Ղուկ. ԻԳ 41): Այստեղ պարզ երեւում է արդարության երկակի դրսեւորումը: Դա մարդու՝ սեփական մեղքը եւ մյուսի անմեղությունն ընդունելու պարագան է: Ահա ազնիվ, ոչ եսակենտրոն գիտակցության օրինակ: Սա կարող է բացահայտվել նաեւ խիստ մեղավոր մարդու մոտ: Սա նաեւ ապացույցն է այն բանի, ինչն ասում է Դոստոեւսկին մարդու մասին ընդհանրապես եւ ռուս մարդու մասին մասնավորապես՝ իր «Գրառումներ Մեռյալ տնից» գրքում: Դոստոեւսկին տեսավ, որ նույնիսկ անդառնալի հանցագործի հոգու խորքում թաքնված է մարդկայինի այն կայծը, որում էլ հենց դրսեւորվում է մարդու մեջ Աստծո պատկերը: Այդտեղ, այդ կայծում է ակունքը ողջ աշխարհի արդարության: Աստծուց լույսը հոսում է մարդու, իր հոգու հայելին փայլեցրած մարդու միջոցով. այն մարդու, որն իր խղճի վրայից մաքրում է փոշին՝ արտացոլելու համար Աստծո Լույսը:

Արդարության ուզածդ դրսեւորումից մեծ մխիթարություն ենք զգում՝ անկախ դրա անձամբ մեզ վերաբերելուն կամ չվերաբերելուն: Արդարությունն ինքնին լույս է: Եվ երբ մենք առնչվում ենք դրա հետ, ապրում ենք կյանքի լիության եւ ուրախության զգացումներ: Այդ ժամանակ Աստված մեզ հետ է: Դա հասկացել էր Գողգոթայում խաչված ավազակը: Դրա համար էլ նա Քրիստոսի հետ մտավ դրախտ:

Արդարության մեծագույն հաղթանակը տեղի է ունենալու վերջին Դատաստանի օրը, երբ Աստված «կկտրի ամեն մի արցունք» մարդու աչքից: Այն ժամ ամեն բան կկոչվի իր իսկական անունով, կընկնի ուզածդ կեղծ մեծությունը, եւ ճշմարտությունը կզբաղեցնի իր ճշմարիտ տեղը: Դա կլինի աստվածացումը համաշխարհային արդարության եւ գերագույն սիրո:

Մեր շուրջը տիրող արդարությունը տեսնելը, մարդկանց հանդեպ մեր սեփական արդարությունը զգալը մեծ երջանկություն է, քանզի գերագույն արդարությունը վեր է արդարությունից, եւ նրա անունը սեր է:

*Թարգմանությունը՝*
*Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ*

## ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ



# ՕԾՎԵՑԻՆ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ԲԱԳՐԱՏԱՇԵՆԻ ՄԱՏՈՒՌԻ ԽԱՉԵՐԸ

Հոգեւոր կյանքի վերազարթոնքն արտահայտվում է նաեւ նրանով, որ հայոց երկրում հին եկեղեցիների կողքին ավելանում են նորերը, վերակառուցվում հները՝ ցույց տալով աշխարհին հայի հավատքի ուժն ու ապրելու վճռականությունը:

Գուգարաց թեմն անմասն չէ այդ զարթոնքից: Վերջին վեց-յոթ տարիների ընթացքում թեմում թափ է առել եկեղեցաշինությունը: Շուրջ մեկ տարի առաջ, գյուղացիների ջանքերով եւ տեղաբնակ բարերարների նյութական օժանդակությամբ, սկսվեց Արեւաշող գյուղի եկեղեցու եւ Բագրատաշենի մատուռի շինարարությունը:

Եվ ահա, օգոստոսի 7-ին թեմի առաջնորդ Տեր Սեպուհ եպս. Չուլջյանի ձեռքով կատարվեց Արեւաշող գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցու, իսկ օգոստոսի 9-ին՝ Բագրատաշեն գյուղի մատուռի խաչերի օծման կարգը: Օրհնանքի բազում խոսքեր ասացին գյուղացիները նորակառույց եկեղեցու եւ մատուռի բարերարներ Սամվել Ադամյանին եւ Նորիկ Վարդանյանին՝ մաղթելով նրանց ընտանիքներին արեւշատություն ու բարօրություն:



Առաջնորդ սրբազանն իր խոսքում նշեց. «Խաչն օծվելով դարձավ երկրպագելի սրբություն բոլորիս համար, որ տրվել է մեզ երկնավոր Տիրոջից՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսից՝ Խաչի վրա Իր Արյան հեղմամբ: Խաչն է պարծանքն ու մխիթարությունը քրիստոնյայի, գործի սկիզբն ու ավարտը, մեր անդնդախոր ցավերի դարմանն ու դեպի Երկնքի արքայություն առաջնորդողը»:

Արարողության ավարտին ներկաները մոտենում, երկյուղով ու հավատով համբուրում էին օծված խաչերը՝ այդ եզակի երեւույթի մեջ զգալով պահի անկրկնելիությունը: Վերջում բարերարները ժողովրդին մատուցեցին ավանդական մատաղը:

*Աստղիկ ԱՍՐՅԱՆ*



# ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԲԱՑ ԴԱՇՏՈՒՄ

## Խորհրդածություններ (մասնակի կրճատումներով)

Սկիզբը՝ էջ 3

Հիմա, երբ թվում է, թե բոլոր կողմերից առավել բաց են աշխարհի հետ կապող ուղիները, մենք իրականում հայտնվել ենք մշակույթի փակ դաշտում, թաղվել մի տեսակ ինքնաբավ գավառականության մեջ: Խզվել են նախկին կենսունակ կապերը, իսկ նոր կապեր ստեղծելու մասին չենք էլ մտածում: Իսկ ինչ էլ փորձում ենք անել, լավագույն դեպքում ձեւական-ցուցադրական բնույթ է կրում. անգամ հայագիտական միջազգային գիտաժողովը, Գրիգոր Նարեկացու պես համաշխարհային նշանակության բանաստեղծի ծննդյան 1000-ամյակի նշումը:

Ժամանակները փոխվեցին, եւ հիմա խզված կապերի հիշողությամբ ու նախկին սովորույթի ուժով ինչ-որ մի բան կարծես ջանում են անել, բայց դա էլ արդյունք չի տալիս, քանի որ չկան նախկին միասնական կառույցները: Նո՛ր բան պիտի արվի, սակայն դեռեւս չի գիտակցվում՝ ի՞նչ եւ ինչպե՞ս:

Ազատության եւ ժողովրդավարության տասնամյակն արդեն անցյալ է. ի՞նչ արժեքավոր գիրք դրեցինք ընթերցողի սեղանին, այդ ո՞ր գիրքը հետաքրքրություն առաջացրեց գոնե սփյուռքի մի քանի գրասերների շրջանում, այդ ո՞ր գիրքը դրվեց համազգային ուշադրության կենտրոնում, էլ չեմ ասում համաշխարհային ուշադրության արժանացավ: Լավ, ենթադրենք հայ գրողը, հայ գիրքը դժվարությամբ են դուրս գալիս միջազգային ասպարեզ (կամ դուրս չեն գալիս), մի՞թե հայրենիք-սփյուռք սահմանների՝ մեր հայերենի մեջ անգամ դնելու մի լուրջ բան չունենք...

Ո՞ւր են թատերական նոր ներկայացումները, երաժշտական նոր ստեղծագործությունները, Հայաստանի արտադրության դրոշմը կրող շարժանկարները: Միակ տեղաշարժը, որ նկատվում է, Երեւանում դրվող արձաններն են՝ Անդրանիկ Զորավար, Մարշալ Բաղրամյան, Գրիգոր Նարեկացի, Հովհաննես Այվազովսկի, Առնո Բաբաջանյան, Սողոմոն Թեհլերյան, որոնց մի մասի գեղարվեստական նշանակությունն էլ կասկածելի է... Ի՞նչ ենք մտածում: Ի՞նչ են մտածում պետության մշակույթի պատասխանատուները: Եթե հույսը դրել են ստեղծագործական միությունների վրա, ապա դժվար թե արդյունք ակնկալեն, որովհետեւ այդ կազմակերպությունները գործում են նախկին ժամանակների սովորույթի ուժով՝ լավագույն դեպքում միայն միջոցառումներ են անում եւ ոչ թե մշակութային կյանք կազմակերպում կամ ստեղծում:

Բարձր մշակույթից հեռացումը խորապես ազդեց մարդկանց ազգային ինքնագիտակցության վրա: Հոգեւոր անկումը հանգեցրեց ազգային ոգու անկման: Վերջին շրջանում մեր ժողովրդի մեջ ակնհայտ է հայրենասիրության պակասը, ավելացել է ազգային նիհիլիզմը, ձեւախեղվում է հայ մարդու կերպարը: Օտար բարքերից սնված զանգվածային կեղծ մշակույթը, համաշխարհայնացման (գլոբալիզացիա) կործանարար ազդեցությունը մեծ հարված են հասցնում ազգային մշակույթին, հետեւաբար նաեւ ազգային ոգուն: Այս ամենն իրապես սպառնում է Հայաստանի ազգային անվտանգությանը: Այնքան ենք ընկել, որ հայ մարդն ամաչում է իր ազգային պատկանելությունից: Այս զգացողությունն այս կամ այն չափով, բացահայտ թե թաքուն, իր մեջ կրում է հայրենիքից հեռացող (չէ՛, փախչող) յուրաքանչյուր ոք: Այս վիճակն ազգային ոգու ընդհանուր անկման արտահայտություն է, որի փրկությունը տնտեսական ապահովությամբ հիմնավորված բարձր մշակույթն է, ինչն էլ պիտի հիմք դառնա ազգային ինքնագիտակցության համար եւ կենդանի պահի յուրաքանչյուր հայ մարդու (ուր էլ նա լինի) թե՛ ազգային եւ թե՛ մարդկային արժանապատվությունը:

Մեր կյանքը շատ է քաղաքականացված, բայց քաղաքական գաղափարախոսություն ըստ էության չկա: Նույն միջավայրի ու բարոյականության ծնունդ են այսօրվա տարբեր կուսակցությունները: Դրա համար էլ դրանց մեջ գրանցված առանձին անդամներ հեշտությամբ մի կուսակցությունից անցնում են մյուսին: Եվ կուսակցություն ասածն էլ ոչ թե գաղափարական սկզբունքների միավորում է, այլ անհատական շահերի: Դա է պատճառը, որ նախագահական, պատգամավորական, տեղական մարմինների ընտրություններն այդքան անախորժ լարվածություն են հաղորդում մեր կյանքին, թափանցում յուրաքանչյուրի շահերի ոլորտը:



Այսինքն՝ որպես ազգային միավոր ջլատված ենք քաղաքական շահերով: Ջլատված ենք նաեւ կրոնական պատկանելությամբ: Հայ Առաքելական Եկեղեցին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, դժբախտաբար համայն հայությանը համախմբող միակ հոգեւոր ուժը չէ: Կաթոլիկ ենք ու բողոքական, ավետարանական ենք ու աղանդավոր: Ժամանակին այս ջլատումը նկատի ուներ Մ. Պեշիկթաշլյանը, որ եղբայրության ու միավորման կոչ արեց. «Ընդ աստեղօք ի՞նչ կա սիրուն, Քան զանձկալի եղբայր անուն»: Ջլատված է մեր ուղղագրությունը: Այսպես ենք, որովհետեւ ջլատված է մեր հայրենիքը եւ մեր հայրենիքի ամբողջականության համազգային գիտակցումը:

Շարունակելի
Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

## ԶԱՔԱՐԻԱ Ա ՁԱԳԵՑԻ

# Ներբող՝ [նվիրված] ամենօրհնյալ Տիրուհու՝ Աստվածածնի եւ միշտ Կույս Մարիամի Ննջմանը

Սկիզբը՝ էջ 3

Տիրոջ համբարձումից հետո երանելի Մարիամն անարատ վարքով մարմնի մեջ ապրեց տասնմեկ տարի. անարատ Աստվածածինը հիսունինը տարեկան էր, եւ նրա գեղեցկությունն ու վայելչությունը չէր փոփոխվել, այլ մնացել էր այնպիսին, ինչպիսին երբ Տիրոջ տաճարում էր: Երանելի սուրբ կույսն ապրում էր Երուսաղեմում՝ իր ծնողների տանը, եւ նրան սպասավորում էր Հովհաննեսը: Մի օր Աստվածածնին տեսիլք երեւաց, թե՝ «Պիտի փոխվես այս երկրից [հավետ] կենդանիների աշխարհ»: Եվ նա խնդրեց Տիրոջը՝ տեսնել բոլոր երանելի սուրբ առաքյալներին. քանի որ գնացել էին հեռու երկրներ, ցրվել էին ամբողջ աշխարհում՝ քարոզելու տիեզերքի փրկության Ավետարանը: Եվ սուրբ ամպեր հափշտակեցին աստվածախոս սուրբ առաքյալներին ամեն մի երկրից եւ զանազան գործերից, եւ նրանք մի ակնթարթում եկան եւ հավաքվեցին Երուսաղեմում եւ կանգնեցին սուրբ Աստվածածնի դիմաց, մինչ նա դրված էր իր սուրբ անկողնում: Սուրբ առաքյալները շրջապատեցին նրան, նստեցին նրա մահճի շուրջը եւ արթուն մնալով՝ միմյանց հետ խոսեցին փրկության խոսքեր:



Գիշերով սաստիկ երկրաշարժ, սքանչելիք եւ փայլատակություն ճառագեց նրանց շուրջը: Եվ ահա Քրիստոս՝ տերերի Տերն ու սերովբեների Թագավորը եկավ կանգնեց նրանց մեջ: Երբ լույսը բացվեց, ամենօրհնյալ Աստվածածինը ննջեց, եւ փառքերի Տերը աներեւութացավ նրանց աչքից: Երանելի առաքյալները վերցրին սուրբ նշխարները ջահերով եւ մոմեղեններով, սաղմոսներով եւ օրհնությամբ, իսկ սուրբ հրեշտակների բանակները վայր իջնելով՝ երգում էին նրանց հետ: Քաղաքը լցվեց նրանց հոգեւոր երգերի հնչյուններով: Երկնայիններն իջած երգում էին, եւ ամբողջ բազմությունը, մի վայրում հավաքվելով, շտապում էր տեսնել հրաշափառ եւ սքանչելի գործը: Անօրեն հրեաները զայրանալով կամեցան հափշտակել եւ այրել հոգեւոր սուրբ գանձը: Իսկ քահանայապետը բռնեց դագաղից եւ կամեցավ վայր գցել այն: Սակայն արմունկից պոկվեց նրա ձեռքը, եւ նա աղաղակեց դեպի Պետրոսն ու նրա աշակերտները. «Ողորմեցեք ինձ, Քրիստոսի՛ աշակերտներ»: Եվ Պետրոսն ասաց. «Հավատո՞ւմ ես անժամանակ Բան Աստծուն»: Եվ նա ասաց. «Հավատո՛ւմ եմ», եւ նույն պահին ողջացավ ձեռքը: Եվ այն օրը հավատացին եւ Քրիստոսով մկրտվեցին շատերը:

Իսկ սուրբ առաքյալները ամենօրհնյալ սրբուհու մարմինը տարան եւ ամփոփեցին Գեթսեմանիի ձորում: Եվ առաքյալները մի քանի օր մնացին Երուսաղեմում: Եվ ահա երրորդ օրը Հնդկաստանից եկավ Թովմասը եւ աղաչեց ու խնդրեց Պետրոսին եւ մյուս առաքյալներին՝ տեսնելու կենաց գանձը՝ երանելի Մարիամի՝ անարատ Աստվածածնի սուրբ նշխարները՝ [ասելով]. «Որպեսզի արժանի լինեմ համբուրել անճառելի Բան Աստծո տաճարին»: Բոլոր աշակերտները բազում ժողովրդի հետ միասին ճանապարհ ընկան դեպի սուրբ գանձի տեղը՝ կատարելու սուրբ Թովմասի տենչանքը: Եվ ահով ու դողությամբ աղոթելով՝ բացեցին երկնավոր գանձի տապանը եւ ոչինչ չգտան այնտեղ, բացի պատանքից: Եվ փառավորելով Աստծուն՝ վերադարձան:

Պետրոսն ասաց բազմությանը. «Իմ սիրելինե՛ր ու հավատակիցնե՛ր, ուղիղ փառավորությամբ ամենօրհնյալ սուրբ եւ անբաժանելի Միությանը դավանողնե՛ր, ունկն դրեք իմ բերանի խոսքերին: Վեցթեւյան սերովբեները երանելի են, քանի որ մերձ են անհասանելի Աստվածությանը, բազմաչյա քերովբեները ցանկալի են, քանի որ մոտ են Սուրբ Երրորդությանը: Քառակերպյան կենդանիները երանելի են, քանի որ անաթոռ են անհաս տերությանը: Եվ բոլոր զորությունները բաղձալի են, քանի որ սպասավոր են անժամանակ գերազանց լույսին: Իսկ սա առավել մեծ փառքի հասավ եւ սքանչելի պատվի արժանի եղավ, քան բոլորը. քանի որ սրա մեջ բնակվեց անճառելի Բան Աստված եւ մարմին առավ սրա բնությունից եւ խառնեց Իր անխառնելի Աստվածությանը: Երկու կատարյալ գոյություններից մի կատարյալ գոյություն. Աստված՝ Հորից, եւ մարդ՝ Կույսից: Երկնքում՝ անմայր, եւ երկրում՝ անհայր: Հորից անժամանակ ծնվեց՝ անմայր, իսկ Կույսից ծնվեց ժամանակի մեջ՝ անհայր, որի համար էլ Աստվածածին ենք անվանում նրան, քանի որ մարմնով ծնեց Բան Աստծուն, որով մահը կործանվեց, դժոխքը խորտակվեց, եւ մահը չկարողացավ նրան տիրել, քանի որ Նրա անարատ վարքի մեջ մահվան համար տեղ չկար: Սակայն նախահոր մեղքերի պատճառով մահ ճաշակեց:

Եվ այժմ մարմնով վերափոխվեց [հավերժ] կենդանիների երկիրը եւ դեպի դրախտի տենչալի կենաց ծառը, ուր կան տեսակ-տեսակ հրաշափառ տունկեր, որոնք զարդափայլում են համեղ ու գունեղ պտուղներով: Ուր եդեմածին մշտաբուխ աղբյուրը, չորս բաժանված գետերով հավերժ հոսելով, ջրում եւ զվարճացնում է դրախտի տենչալի վայրը: Եվ անմարմին սուրբ սերովբեն փակ է պահում կենաց ծառի ճանապարհը, ուր այսօր վերափոխվեց սուրբ Աստվածածինը՝ միշտ կենդանի մայրը, քանի որ անմահության բաժակը ճաշակեց եւ միշտ բարեխոսում է աշխարհի համար:

Արդ, ո՛վ ամենօրհնյալ Աստվածածին, ոսկի, արծաթ, կնդրուկ եւ զմուռս չունեմ, որպեսզի, մոգերի հետ գալով, ընծայեմ հրաշափառ Ծնունդիդ կամ էլ գեղեցկատես տաճար շինեմ, այլ իմ աղքատ ու չքավոր մտքի փոքրիկ խոսքը քեզ հարմարեցրի: Ընդունի՛ր այն՝ իբրեւ քեզ հաճելի, եւ բարեխոսի՛ր մեր բոլորի Տիրոջ մոտ, որպեսզի ինձ չհեռացնի հավիտենական կյանքից, այլ արժանի դարձնի հասնել եւ անմարմին զորքերի հետ փառավորել Հորը, Որդուն եւ Սուրբ Հոգուն հավիտյանս հավիտենից. ամեն:

Աշխարհաբարի վերածեց
Մաոթա ԱՐԱԲՅԱՆԸ

# ԱԿՆԱՌՈՒ ԽՐԻՄՅԱՆԱԳԵՏԸ

## (ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)



Վաստակաշատ պատմաբան, պատմագիտության դոկտոր Էմմա Աշոտի Կոստանդյանը այս տարի թեւակոխեց իր կյանքի յոթերորդ տասնամյակը:

Ծնվել է Վանաձորում, արհեստավորի ընտանիքում: Միջնակարգ կրթությունը ստացել հայրենի քաղաքում: 1951 թ. ընդունվել եւ 1956 թ. գերազանցության դիպլոմով ավարտել է Երեւանի պետհամալսարանի բանասիրական ֆակուլտետը:

1958-ին աշխատանքի անցել Գիտությունների ազգային ակադեմիայի Պատմության ինստիտուտում՝ որպես լաբորանտ, ապա սովորել նույն ինստիտուտի ասպիրանտուրայում: Ուսումնառության տարիներին նրա գիտական ղեկավարն է եղել ականավոր պատմաբան, ԳԱ ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը, որից շատ բան է սովորել: Է. Կոստանդյանի գիտական քայլերին իր մեծ նպաստն է բերել նաեւ մեծանուն պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը:

1971 թ. Է. Կոստանդյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Գարեգին Սրվանձտյանցի հասարակական-քաղաքական գործունեությունը» թեմայով, որը լույս է տեսել 1979 թ.:

Լայն եւ ընդգրկուն է Է. Կոստանդյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը: Նա տարիներ շարունակ հետազոտել է Մկրտիչ Խրիմյանի կյանքն ու հասարակական-քաղաքական գործունեությունը, տեսական եւ հոգեւոր ժառանգությունը եւ հրապարակել մի շարք ուշագրավ հոդվածներ:

1999 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Մ. Խրիմյան. հասարակական-քաղաքական գործունեությունը» թեմայով, որն առանձին գրքով հրատարակվեց 2000 թ.:

Է. Կոստանդյանը հեղինակակից է փաստաթղթերի գիտական երկու ժողովածուների:

2003 թ. լույս տեսավ վաստակաշատ հետազոտողի երրորդ մենագրությունը՝ «Կոստանդնուպոլսի «Արեւելք» օրաթերթը» խորագրով: Հրատարակության գործընթացում է մի այլ՝ «19-րդ դարի 80-ական թվականների արեւմտահայ մշակութային եւ հասարակական-քաղաքական կյանքի դրվագներ» մենագրությունը:

Է. Կոստանդյանը խորությամբ հետազոտել է հայ հոգեւորականության ունեցած դերն ու նշանակությունը 19-րդ դարավերջին հայ ազգային-ազատագրական մաքառումներում:

Բավական պատկառելի մի ժամանակահատված է արդեն, ինչ Է. Կոստանդյանը պաշտոնավարում է պատմագիտական մտքի կաճառում, ուր այժմ վարում է նոր պատմության բաժնի վարիչի պարտականությունները:

Ձեռքբերումներով ու գիտական արժեքավոր պրպտումներով լի է նրա անցած ճանապարհը:

Տարիներ շարունակ Է. Կոստանդյանը հայոց պատմության շունչն ու ոգին է փոխանցել մատաղ սերնդին՝ դասավանդելով հանրապետության մի շարք միջնակարգ ու բարձրագույն կրթօջախներում:

Ներկայումս նա աշխատում է «Մաղաքիա Օրմանյանի հասարակական-քաղաքական եւ գիտական գործունեությունը» ուսումնասիրության վրա:

Է. Կոստանդյանը խմբագրել է բազմաթիվ աշխատություններ, զեկուցումներով հանդես եկել միջազգային եւ հանրապետական գիտաժողովներում, ղեկավարել ասպիրանտների աշխատանքները:

Նրա առանձին հոդվածներ նվիրված են Հայ Առաքելական եկեղեցու ականավոր գործիչներին, պետության, եկեղեցու եւ ժողովրդի փոխհարաբերություններին:

Հայ գիտական հասարակայնությունը մշտապես հետաքրքրությամբ է սպասում վաստակալեցուն գիտնականի նորանոր աշխատությունների եւ հոդվածների երեւան գալուն:

*Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ*
*Պատմ. գիտ. թեկնածու*

**ԱԼԵՔՍԵՅ ՕՍԻՊՈՎ**

# Ո՞Վ Է ԱՍՏՎԱԾ

## (մասնակի կրճատումներով)



*Սկիզբը՝ թիվ 14, 15*

Քրիստոնեությունից դուրս զանազան պատկերացումներ կան Աստծո մասին: Ընդ որում, Նրա բարձրագույն ըմբռնումը, որին հարում էին տարբեր կրոններն ու որոշ հին փիլիսոփաներ, հանգում էր արդար Դատավորի, բարձրագույն Ճշմարտության, կատարելագույն Բանականության վարդապետություններին: Իսկ այն, որ Աստված Սեր է, մինչ Քրիստոսը ոչ ոք չգիտեր: Ահա մի օրինակ: Մեր Եկեղեցում կա Իրանի մահմեդականների հետ երկխոսության հանձնաժողով: Մի անգամ հարց բարձրացվեց Աստծո բարձրագույն հատկության եւ առաքինության մասին: Հետաքրքիր էր, որ մահմեդական աստվածաբանները մեկը մյուսի ետեւից խոսում էին, թե այդ հատկությունը արդարությունն է: Մենք պատասխանեցինք. «Եթե այդպես է, ուրեմն ամենաարդարը համակարգիչն է: Եվ մի՞թե դուք չեք դիմում Ալլահին՝ «ամենաողորմած եւ բարեգութ»: Նրանք ասացին. «Այո, բարեգութ, բայց Դատավոր: Նա արդար է դատում, եւ դրա մեջ է արտահայտվում Նրա գթասրտությունը»: Ինչո՞ւ ոչ քրիստոնեական գիտակցությունը չգիտեր եւ չգիտի, որ Աստված հենց Սեր է եւ ուրիշ ոչինչ: Որովհետեւ մարդկանց մոտ խեղաթյուրվել է սեր հասկացությունը: Մարդկային խոսքում սեր ասելով հասկանում են բացարձակ ներում, պատժի բացակայություն, այսինքն՝ կամայականության ազատություն: Արա ինչ ուզում ես. ահա ինչ է «սերը» մարդկայնորեն: Մենք մեր ընկերոջն ամեն ինչ ներում ենք, իսկ ով տհաճ է մեզ՝ կառչում նրա յուրաքանչյուր մանրուքից: Մեր մեջ աղավաղվել է սեր հասկացությունը: Իսկ քրիստոնեությունը վերադարձնում է դրա ճշմարիտ ընկալումը:

Ի՞նչ է քրիստոնեական սերը: «Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ Իր Միածին Որդուն տվեց, որպեսզի, ով Նրան հավատում է, չկորչի, այլ ընդունի հավիտենական կյանքը» (Հովհ. Գ 16): Սերը զոհաբերություն է: Բայց ո՛չ կույր զոհաբերություն: Տեսե՛ք, թե Քրիստոսն ինչպես էր հակազդում չարին. «Օձեր, իժերի ծնունդներ» (Մատթ. ԻԳ 33): Վերցնում էր մտրակը եւ վռնդում տաճարում առեւտուր անողներին, շուռ տալիս նրանց սեղանները: Հիշում եմ արքեպիսկոպոս Ալեքսանդր Տյան-Շանսկու գրքից մի դրվագ, ուր նա 14-15 տարեկան էր: Նա գրում է. «Ես ինչ-որ գրքույկ վերցրի եւ սկսեցի զննել նկարներից մեկը, որտեղ պատկերված էր ձիերի զուգավորումը: Եվ հանկարծ մայրս նկատեց: Ես երբեք չէի տեսել նրան այդքան բարկացած: Քնքուշ ու բարի մայրս զայրույթով խլեց գիրքն իմ ձեռքից: Դա սիրո ցասում էր, որը երախտագիտությամբ եմ հիշում ողջ կյանքում»:

Մարդիկ չգիտեն՝ ինչ է սիրո ցասումը, եւ սիրո տակ հասկանում են միայն ավելորդ ներողամտությունը. եթե Աստված Սեր է, հետեւաբար՝ արա ինչ ուզում ես: Այստեղից էլ հասկանալի է դառնում, թե ինչու են միշտ բարձրագույն առաքինություն համարել ու համարում արդարությունը: Մենք տեսնում ենք, որ նույնիսկ քրիստոնեության պատմության մեջ այդ վեհ վարդապետությունն աստիճանաբար անտեսվել է, խեղաթյուրվել:

Աստված-Սեր քրիստոնեական վարդապետությունը խորապես ընկալել եւ բացահայտել են սուրբ հայրերը: Սակայն պարզվում է, որ այդ ընկալումը հոգեբանորեն անմատչելի է հին մարդու համար: Դրա վառ օրինակը փրկաբանության կաթոլիկ վարդապետությունն է: Ա. Խոմյակովի դիպուկ բնորոշմամբ՝ այն նման է Աստծո եւ մարդու միջեւ դատական անդադար հայցի: Սա սիրո՞ հարաբերություն է: Ո՛չ՝ դատի: Մեղք գործեցիր՝ համապատասխան վճարով բավարարիր Աստծո արդարադատությանը, քանզի մեղքով վիրավորեցիր Աստվածությանը: Նրանք նույնիսկ չեն հասկանում, որ Աստծուն անհնար է վիրավորել, որովհետեւ հակառակ դեպքում Նա ոչ թե ամենաերանելի, այլ ամենատառապող Էությունը կլիներ: Եթե Աստված անդադար վիրավորվում է մարդկային մեղքերից, անդադար բարկանում մեղավորների վրա, ապա ինչ երանության, ինչ սիրո մասին կարելի է խոսել: Այս դեպքում Նա դատավոր է: Այստեղից էլ հորինվել է մարդու արժանավոր, նույնիսկ գերարժանավոր գործերի մասին հպարտ վարդապետությունը, որ նա կարող է ունենալ Աստծո առաջ: Այստեղից էլ ծագում են Քրիստոսի Զոհաբերության՝ որպես վճար Աստծո արդարադատության, քավարանի, ինդուլգենցիայի վարդապետությունները: Կաթոլիկ ողջ վարդապետությունը հանգում է հինկտակարանյան «ակն ընդ ական, ատամ ընդ ատաման» դրույթին: Այն ամբողջությամբ բխում է Աստծո՝ խորապես խեղաթյուրված ըմբռնումից:

Իսկ եթե Աստված Սեր է, ապա ինչպե՞ս հասկանալ այդ Սերը: Մարդիկ տառապո՞ւմ են: Այո: Մի՞թե մարդիկ իրենց մեղքերի համար չեն պատժվում: Պատժվում են եւ այն էլ ինչպես: Մենք դա կարող ենք ապացուցել մեր եւ այլոց փորձով: Թե՛ Սուրբ Գիրքը, թե՛ սուրբ հայրերը խոսում են պատժի մասին: Ուրեմն ինչ, Աստված Արդարությո՞ւն է: Պարզվում է՝ ո՛չ: Երբ մարդկային դժբախտությունն ու տառապանքը գնահատում են որպես Աստծո պատիժ, այսինքն՝ վրեժ՝ մեղքերի դիմաց, ապա մեծ սխալ են գործում: Ո՞վ է պատժում թմրամոլին, ո՞վ է պատժում նրան, ով իրեն ցած է գցում երկրորդ, երրորդ հարկից ու ջարդում ոտքն ու ձեռքը: Ո՞վ է պատժում հարբեցողին: Աստծո վրե՞ժն է: Իհարկե ո՛չ: Այդ տառապանքները բնական հետեւանք են արտաքին աշխարհի օրենքների խախտման: Նույնն է պատահում մարդուն եւ հոգեւոր օրենքները խախտելիս, որոնք առաջնային են, քան ֆիզիկական, կենսաբանական, հոգեբանական եւ մյուս օրենքները: Իսկ Աստված ի՞նչ է անում: Աստծո բոլոր պատվիրանները հոգեւոր օրենքների հայտնություն են եւ նյութական օրենքների նման՝ յուրօրինակ զգուշացում մարդուն: Եթե ուզում եք այսպես ձեւակերպենք, որ Աստված խնդրում է մեզ, թե մի՛ վնասեք ձեզ, մեղք մի՛ գործեք, մի՛ թռեք հինգերորդ հարկից, մի՛ նախանձեք, մի՛ գողացեք, մի՛ խաբեք, մի՛...

Դրանով դուք ձեզ եք վնասում, քանզի յուրաքանչյուր մեղք իր մեջ պատիժ է կրում:

Հիշում եմ, երբ փոքր էի, ձմեռվա մի օր մայրս ասաց, որ երբ ցուրտ է, չի կարելի լեզուն կպցնել դռան երկաթե բռնակին: Հենց մայրս շրջվեց, լեզուս կպցրեցի եւ... ճիչս աշխարհը բռնեց: Ես դա լավ հիշեցի եւ այդ «մեղքը» այլեւս չկրկնեցի: Ինձ մայրս չպատժեց, նա իմ լեզուն չկպցրեց երկաթե բռնակին: Ես չցանկացա ընդունել օրենքներն ու պատժվեցի: Այդպես եւ Աստված է մեզ «պատժում»: Մեր տառապանքներն Աստծո վրեժը չեն: Աստված Սեր է եւ մեզ նախօրոք զգուշացնում է, հորդորում, խնդրում. «Այդպես մի՛ վարվեք, քանի որ դրան անպատճառ կհետեւի ձեր տառապանքն ու վիշտը»:

Բայց այն մտայնությունը, որ Աստված վրեժ է լուծում եւ պատժում, լայնորեն տարածված եւ խորապես արմատավորված մոլորություն է: Իսկ կեղծ գաղափարը ծնում է համապատասխան հետեւանքներ: Կարծում եմ՝ շատ եք լսել մարդկանց, ովքեր վրդովված են Աստծուց: Ըմբոստանում են Աստծո դեմ. «Ի՞նչ է, ե՞ս եմ բոլորից մեղավորը: Ինչո՞ւ Աստված ինձ պատժեց»: Դժգոհում են, որ երեխաները լավը չեն, ինչ-որ բան այնպես չէ, գործերը թարս են գնում: Ամենուր կլսեք. «Ի՞նչ է, ե՞ս եմ բոլորից մեղավոր: Ահա ինձանից վատը կա, բայց ապրում է բարօրության մեջ»: Այսպես հասնում են աստվածանարգության, անեծքների, ատվածմերժության: Ինչի՞ց է բխում այս ամենը: Հրեա-հեթանոսական աղճատված աստվածըմբռնողությունից: Ոչ մի կերպ չեն կարողանում հասկանալ ու ընդունել, որ Նա ոչ մեկից վրեժ չի լուծում, որ Նա մեծագույն Բժիշկն է՝ միշտ պատրաստ օգնելու մեղքերն անկեղծորեն զղջացողին եւ ի խորոց սրտի ապաշխարողին: Նա վեր է մեր վիրավորանքներից: Հիշեք Հովհաննու Հայտնության հրաշալի խոսքերը. «Ահավասիկ Ես դռան առաջ եմ եւ բախում եմ. եթե մեկը ականջ դնի Իմ ձայնին եւ բաց անի դուռը, կմտնեմ նրա մոտ եւ կընթրեմ նրա հետ, եւ նա՝ Ինձ հետ» (Հայտն. Գ 20):



*Թարգմանությունը՝*
*Ավետ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ*




# ՀՈԳՈՒ ՊՈՌԹԿՈՒՄՆԵՐ

«Մուղնի» հրատարակչությունն այս տարի լույս է ընծայել Խոր Վիրապ վանքի վանահայր Տ. Զարեհ վրդ. Կաբաղյանի «Ոտնաձայներ տիեզերքում» բանաստեղծությունների ժողովածուն՝ մեկենասությամբ տեր եւ տիկին Անուշավան եւ Անուշ Շահինյանների: Ընթերցողին ժողովածուն ներկայացնելու լավագույն կերպը համարեցինք հեղինակի՝ գրքում զետեղված «Երկու խոսք»-ը:

## «Եվ Աստված մարդուն ստեղծեց Իր պատկերով...» *(Ծննդ. Ա 27)*

Աստվածապարգեւ այս երեւույթն արտահայտվեց ոչ միայն մարդու եւ Աստծու ֆիզիկական նմանությունը շեշտադրելու, այլեւ Աստված-մարդ հոգեւոր-բարոյական կենսակերպի շարունակականությունն ընդգծելու, Սրբազան ուխտը հավերժացնելու համար: Մարդը, բանականություն ստանալով, բացելով աչքերը կյանքի խավարի առջեւ, պետք է լուսավորեր եւ լուսավորվեր, դառնար Աստծու զավակը, արարեր, կերտեր, ստեղծեր իրեն շնորհված կարողությամբ, աստվածաշնորհ սիրով, ամրացներ իր եւ Բարձրյալի միջեւ ստեղծված Սրբազան ուխտը: Իսկ այդ ուխտը ծնվեց մարդու հոգու ու սրտի խորքերից եւ, բարձրանալով, ամրագրվեց տիեզերական անծիրում: Ահա թե ինչու մարդու ստեղծման առաջին իսկ պահից մարդկային պատմությունը զարգացավ ու առաջադիմեց աստվածային հայտնության եւ մարդու աշխարհընկալման երեւույթի միաշաղկապումից: Եվ աստվածային իմաստության ու մարդկային մտքի միախառնումից ծնվեց Գիրք Գրքոցը, որով մեզ փոխանցվեց Աստծո շունչը՝ «Թող լույս լինի» պատգամով: Աստվածային սերը դարձավ սիրո աղբյուր: Մարդն, ընդունելով այդ, սկսեց ընթանալ աշխարհճանաչողության աստիճանական ճանապարհով: Իսկ այդ երկար ճանապարհին բազում էին խոչընդոտները, անկումներն ու վերելքները, ինչպես նաեւ հավերժաբար ձգվող չարի ու բարու անզիջում պայքարը: Այդ ճանապարհին, սակայն, մարդուն միշտ լսելի եղան բարու տիեզերական ոտնաձայները, որոնք ոչ միշտ առաջնորդեցին նրան:

Բանաստեղծությունների փոքրիկ այս գրքույկում փորձել եմ այդ ամենն արտահայտել չափածո խոսքով, որը միտված է մերժելու չարը, ընդգծելու բարին, գեղեցիկը, ինչպես նաեւ գթասրտությունն ու արդարամտությունը, որոնք այնքան ներդաշնակ ընդգծված էին պաշտելի հորս՝ երջանկահիշատակ Հարություն Եսայու Կաբաղյանի ներաշխարհում: Եվ նրա խնկելի եւ անմեռ հիշատակին էլ ձոնել եմ ժողովածուն:

Դիմելով ընթերցողներիս՝ կցանկանայի, որ իմ համեստ գրությունները դիտարկեն ոչ իբրեւ գեղարվեստական արժեքներ, այլ որպես կյանքի տարբեր հրամայականների ներքո, տարբեր պարագաներում հոգեւորականի սրտից ու հոգուց պոռթկած զգացմունքների արտահայտություն: Ես նպատակս իրականացած կհամարեմ, եթե համոզվեմ, որ խոհերս կարողացել եմ հասցնել ընթերցողին, եւ որ դրանք օգնել են մտորել մարդկային այն հատկանիշների շուրջ, որոնք Արարիչը պարգեւել է մեզ եւ Իր օրհնակով ցանկացել է զուլալ ու ներդաշնակ պահել դրանք մեր մեջ: Ես նաեւ երջանիկ կլինեմ, եթե հոգուս այս պոռթկումները մեկ անգամ եւս կարողանան հուշել մարդկանց, որ Աստված մեզ ստեղծել է Իր պատկերով, եւ մենք Տիրոջ տաճարը միշտ կանգուն պետք է պահենք մեր հոգիներում:

Այսպես միայն կհաղթենք չարին:

---

> Ժամանակի յուրաքանչյուր ծփանք հուշարձանի վրա դնում է իր ստվածքը, յուրաքանչյուր սերունդ՝ իր շերտը, եւ յուրաքանչյուր անհատ ավելացնում է իր քարը:
>
> Վ. Հյուգո

# ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Վերջին տասնամյակներում հայ պատմագիտության զգալի առաջընթացը, հայ ժողովրդի մշակութային ժառանգության ուսումնասիրման օրըստօրե լայնացող մասշտաբները, օտարերկրյա գիտնականների հետ ծավալած գիտական արդյունավետ համագործակցությունը հնարավորություն են տալիս եւ պահանջ առաջադրում առավել ուշադրություն դարձնելու նյութական մշակույթի՝ այդ թվում ճարտարապետության եւ շինարվեստի կնճռոտ, հստակեցման կարոտ հարցերի ուսումնասիրմանը: Դա վերաբերում է նաեւ 8-9-րդ դարերի հայ ժողովրդի շինարարական-ճարտարապետական գործունեությանը, որին եւ նվիրված է ճարտարապետության դոկտոր Գառնիկ Շախկյանի «Հայ ժողովրդի ճարտարապետական-շինարարական գործունեությունը VIII-IX դարերում» մենագրություն-դասագիրքը («Անահիտ» հրատարակչություն, 2004, պետական պատվերով):

Մեր ժողովրդի ճարտարապետական-շինարարական գործունեությունը հաճախ է արգելակվել, կասեցվել օտարերկրյա բռնատիրությունների ծանր լծի եւ հարստահարիչ քաղաքականության հետեւանքով: Այդպիսին է եղել խնդրո առարկա ժամանակահատվածը, երբ Հայաստանը հիմնականում գտնվում էր Արաբական խալիֆության տիրապետության տակ: Այդ շրջանը բնութագրվում է որպես «մեռյալ վիճակ» եւ մեր ժողովրդի պատմության մեջ շինարարական-ճարտարապետական գործունեության առումով չի շրջանառվում:

Քննվող թեմայի շրջանակները լայն են եւ տարողունակ: Հեղինակը գիտական մեծ խնամքով եւ պատշաճորեն է կատարել է 8-9-րդ դարերի հայ ժողովրդի ոչ միայն շինարարական-ճարտարապետական գործունեության բազմակողմանի եւ մանրակրկիտ ուսումնասիրություն, այլեւ հնագիտական, վիմագրական, պատմաբանասիրական եւ այլ բնույթի լայնածավալ հետազոտական աշխատանք:

Պարզվում է, որ արաբական տիրապետության լուծը Հայաստանի համար չի եղել միանշանակ. տարբեր ժամանակներում եւ տարբեր վայրերում այն ունեցել է տարբեր դրսեւորումներ: Կենտրոնական հարթավայրային շրջանների համեմատ բարձրադիր ծայրամասային շրջանները (Սյունիք, Վասպուրական, Արցախ, Վայոց Ձոր, Գուգարք եւ այլն) պակաս չափով են ենթարկվել ասպատակությունների: Դրանց զգալի մասը, չնայած երկրի տնտեսական ընդհանուր անկումին, կարողացել է պահել տիրույթները, նույնիսկ ընդարձակել, զարգացնել ավատատիրական հարաբերությունները, ապրել համեմատաբար ապահով եւ վերընթաց կյանքով: Կախված Արաբական խալիֆության ներքին ու արտաքին աննպաստ վիճակից՝ Հայաստանում ժամանակ առ ժամանակ ստեղծվել են շատ թե քիչ նպաստավոր պայմաններ, որոնք եւ հայ ժողովրդի հոգեկան ու ֆիզիկական ներունակ հնարավորությունների հետ միասին հող են հանդիսացել ճարտարապետական-շինարարական գործունեության համար: Պարզված է, որ այս դարերում չի դադարել երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը, շարունակվել են առեւտուրը, արհեստագործությունը, դրամահատությունը, գիտամշակութային կյանքը, որոնց տվյալները հավաստում են, որ Հայաստանը 8-րդ դ. կեսից սկսած գտնվել է արաբամահմեդական երկրների (Սիրիա, Միջագետք, Իրան, Իրաք եւ այլն) առեւտրատնտեսական եւ մշակութային շրջանակում:

Հեղինակը, քայլ առ քայլ պարզելով ճարտարապետական-շինարարական գործունեության նախադրյալները, մեծապես կարեւորել է փաստական նյութի, ճարտարապետական-շինարարական իրողությունների ճշմարտացի բացահայտումը՝ հետեւելով Ի. Պավլովի այն խոսքին, թե «Որքան էլ կատարյալ են թռչնի թեւերը, դրանք առանց օդին հենվելու երբեք չեն կարողանա թռչնին վեր բարձրացնել: Փաստերը՝ դրանք գիտնականի օդն են, առանց դրանց նա երբեք չի կարող վեր բարձրանալ»:




Վերլուծության արդյունքներով հիմնավորվում է, որ 8-9-րդ դդ. արգասիք են Դվինի քաղաքացիական եւ ամրաշինական կառույցների մի մասը, Արամուսի, Կումայրիի, Քոլատակի, Անիի Պալատական, Սեւանի, Շողագավանքի եկեղեցիները, Նախճավանի Արտավազդ Կամսարականի դամբարանը, Բարեկամավանի վկայարանը, Դսեղի հուշակոթողը: Քննվող դարաշրջանին են վերաբերում հայոց վաղագույն վանքային համալիրներից շատերի (Տաթեւ, Սեւան, Հայրավանք, Շողագավանք, Հերիեր, Արդվի) առաջին եկեղեցիների կառուցումը, ասել է թե՝ համալիրների հիմնադրումը: Այդ դարաշրջանում է կատարվել հայ ժողովրդի մշակութային այնպիսի վիթխարի երեւույթի սկզբնավորումը, ինչպիսին խաչքարային արվեստն է:

8-9-րդ դարերի են վերաբերում պատմամատենագրական տեղեկություններով հավաստվող եւ որոշակիորեն թվագրված Արամուսի կաթողիկոսարանը, Մուշի Ս. Փրկիչ, Մավրակի եկեղեցիները, Ագրճկույսի դաստակերտը, Կարինի, Կամախի, Օձբերդի, Մողաքարի, Վանի միջնաբերդի պալատական եւ այլ շինարարական իրողությունները: 9-րդ դ. երկրորդ կեսին է վերաբերում ավելի վաղ սկսված ֆեոդալական ինքնավարության խորացման գործընթացը, որը մշակույթի՝ հատկապես ճարտարապետության բնագավառում դրսեւորվեց հայոց ճարտարապետական դպրոցների (Շիրակ-Արարատյան, Տարոն-Վասպուրականի, Սյունյաց, Գուգարքի, Արցախյան) ուրվագծմամբ:

Կառույցների ճարտարապետական-հորինվածքային առանձնահատկությունների տվյալներով հեղինակը հիմնավորում է, որ քննվող շրջանի կառույցները վերարտադրում են նախորդ դարերում լայնորեն տարածված հորինվածքային տիպերը (միանավ թաղածածկ դահլիճներ, քառաթեւ կենտրոնագմբեթ, գմբեթավոր բազիլիկ, խաչաձեւ 3/4 հենախորշերով, գմբեթավոր սրահի տիպի եկեղեցիներ եւ այլն)՝ դարաշրջանին հատուկ ոճական, համաչափական, կառուցողական եւ այլ փոփոխություններով:

Միանգամայն արդարացված եւ տրամաբանական է հեղինակի այն մտահանգումը, որ 8-9-րդ դարերի ստեղծագործական եւ շինարարական գործունեությունը չեն կարող որպես կաշկանդված բնութագրվել:

8-9-րդ դարերն ընդգրկող ժամանակաշրջանը, լրացնելով վաղ միջնադար-զարգացած միջնադար ընդունված խզումը, հանդիսանում է այդ երկու դարաշրջաններն իրար միացնող անցումային փուլ (ոչ միայն ժամանակագրական, այլ ինչ-որ չափով նաեւ հորինվածքային առումով), եւ, չնայած նախորդ փուլի համեմատ իր պակաս դրսեւորմանը, կարեւոր դերակատարություն ունեցավ վաղ միջնադարյան կառուցողական ավանդույթների, ստեղծագործական նկարագրի պահպանման համար:

Ուշագրավ դիտարկումներով հեղինակը վկայում է, որ արաբամահմեդական պետական կազմավորման մեջ մտնող ժողովուրդների մի մասը՝ ինչպես հայերը, դիմակայեց եւ պահպանեց լեզվական, ազգային նկարագրի, կրոնական եւ մշակութային կյանքի (այդ թվում՝ ճարտարապետության) անաղարտությունը եւ անկախությունը: Ավելին՝ շոշափելի եւ ակնհայտ է դառնում հայ ճարտարապետական ավանդույթների ազդեցությունը արաբամահմեդական միջավայրի վրա՝ պայմանավորված հիմնականում մշակութային զարգացման առավել բարձր մակարդակով, Հայաստանից դուրս՝ խալիֆության տարածքում կատարվող շինարարական աշխատանքներին հայ վարպետների, գործավորների հարկադրական կամ կամավոր մասնակցությամբ:

Շարադրանքն ուղեկցվում է անհրաժեշտ, հարուստ ու շքեղ պատկերագրական նյութով, որը մատչելի եւ առարկայական է դարձնում պատմատեսական եզրահանգումները, դրանք կերպավորում փաստական հենքով:

Աշխատությունը հիմք է տալիս վերանայելու ավանդաբար գոյություն ունեցող կարծիքը՝ 8-9-րդ դարերի Հայաստանում շինարարական կյանքի վերաբերյալ, ամբողջացնելու հայ ճարտարապետության միջնադարյան փուլի նկարագիրը, ճշգրտելու ժամանակագրական պարբերացումը եւ այլն:

Գ. Շախկյանի «Հայ ժողովրդի ճարտարապետական-շինարարական գործունեությունը VIII-IX դարերում» գիրքն արժեքավոր ներդրում է հայ ճարտարապետության պատմատեսական գիտության հարստացման, տիպաբանական, գեղարվեստական, կառուցվածքային եւ այլ հատկանիշների ճշգրտման ու խորացման եւ ամենակարեւորը՝ հայ ճարտարապետական մշակույթի մոտ 180-ամյա շրջանն ընդգրկող սպիտակ էջերը լրացնելու առումով:

*Արտակ ՂՈՒԼՅԱՆ*
*Ճարտարապետության թեկնածու*

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
ք. Վաղարշապատ, ՔԴԿ

**հեռախոս՝**
**(0+31) 54510**
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան
Ստոր. տպագր. 2.09.2004թ.

**Տպաքանակը՝ 2500**
**Գինը՝ 50 դրամ**